## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

## ՈՐՈՇՈՒՄ

"16" նոյեմբերի 2004թ. N 400

ք.Ստեփանակերտ

### ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԱԹՈՒՂԹԸ ԵՎ ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ջրային օրենսգրքի 121-րդ հոդվածի 5-րդ կետի 6-րդ և 6-րդ կետի 1-ին ենթակետերին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

Հաստատել՝

ա) ջրօգտագործման թույլտվության օրինակելի ձևաթուղթը՝ համաձայն թիվ 1 հավելվածի

բ) ջրօգտագործման թույլտվության օրինակելի ձևերը՝ համաձայն թիվ 2 հավելվածի:

**ԼՂՀ ՎԱՐՉԱՊԵՏ Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆ**

Հավելված 1
ԼՂՀ կառավարության
«16» նոյեմբերի 2004թ.
թիվ 400 որոշման

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԾՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

# ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ N

______________________________________________________________

(ջրօգտագործողի անվանումը)

______________________________________________________________

__________________________________

______________________________________

(ջրային ռեսուրսների կառավարման և (ջրօգտագործման թույլտվություն ստացողի

__________________________________

______________________________________

պահպանության մարմնի ղեկավար) պաշտոնը, ստորագրությունը, անունը, ազգանունը)

______________________________________

______________________________________________

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

Կ.Տ.

Տրված է _____ ____________200 թ. Ուժի մեջ է մինչև _____ ___________________200 թ.

Գործողության ժամկետը երկարաձգված է մինչև _______ ________________________ 200 թ.

_________________________________________

______________________________________________

(ջրային ռեսուրսների կառավարման և (ջրօգտագործման թույլտվություն ստացողի

_________________________________________

______________________________________________

պահպանության մարմնի ղեկավար) պաշտոնը, ստորագրությունը, անունը, ազգանունը)

__________________________________________

__________________________________________________
(ստորագրությունը, անունը, ազգանունը)

1. Ջրօգտագործողի հասցեն

__________________________________________________________ (ջրօգտագործման թույլտվություն ստացողի անվանումը)

__________________________________________________________________________________
(անունը, ազգանունը, հասցեն և հեռախոսահամարը)

__________________________________________________________________________________

2. Ջրօգտագործման վայրը

__________________________________________________________

__________________________________________________________________________________

3. Ջրառի վայրը ______________________________________________________________________

__________________________________________________________________________________

4. Ջրօգտագործման նպատակը _______________________________________________________

__________________________________________________________________________________

5. Ջրօգտագործման ծավալը, այդ թվում՝
ա/ մակերևութային ջրային ռեսուրսներ ________________________________________________

__________________________________________________________________________________

բ/* ստորերկրյա ջրային ռեսուրսներ

__________________________________________________________

__________________________________________________________________________________

6. Ջրօգտագործման ժամանակահատվածը և ռեժիմը

__________________________________

__________________________________________________________________________________

7. Ջրօգտագործման թույլտվության պայմանների ապահովման նկատմամբ վերահսկողության մեխանիզմները

______________________________________________________________________

__________________________________________________________________________________

__________________________________________________________________________________

8. Ջրային ռեսուրսներ կամ դրանց ջրհավաք ավազաններ թափվող կեղտաջրերի թույլատրելի ծավալները

9. Արտահոսքի նկարագրությունը ____________________

10. Կեղտաջրերում վնասակար նյութերի թույլատրելի սահմանային արտահոսքի մասին տվյալները

11. Ջրերի ստանդարտները և (կամ) դրանց վերաբերյալ հրապարակումների տեղեկությունները

12. Հատուկ միջոցառումներ, որոնք կիրառվելու են արդյունավետ ջրօգտագործումը խթանելու և ջրի որակը բարելավելու, գերխոնավ ու առափնյա կարևոր բնական միջավայրը և առնչվող կենսաբազմազանությունը պահպանելու համար ____________________

______________________________________________________________________

______________________________________________________________________

______________________________________________________________________

13. Համապատասխան պահանջներ՝ ջրօգտագործման հաշվառման, մոնիտորինգի, գրանցման և ճշգրտման համար ______________________________________________

______________________________________________________________________

______________________________________________________________________

______________________________________________________________________

14. Համապատասխան երաշխիքներ՝ ջրային ռեսուրսներին վնասներ հասցվելու դեպքում

______________________________________________________________________

______________________________________________________________________

______________________________________________________________________

______________________________________________________________________

15. Ջրօգտագործման թույլտվությանն առնչվող վճարներն ու վճարման ժամանակացույցը

______________________________________________________________________

______________________________________________________________________

______________________________________________________________________

______________________________________________________________________

16. Ջրօգտագործման թույլտվությունը ենթակա է գրանցման պետական ջրային կադաստրում ____________________ օրվա ընթացքում:

*-Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքով սահմանված դեպքերում ստորերկրյա ջրերի օգտագործման համար պահանջվում է նաև ընդերքօգտագործման պայմանագիր:

**ԼՂՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար** **Ս. Գրիգորյան**

Հավելված 2

ԼՂՀ կառավարության
«16» նոյեմբերի 2004թ.
թիվ 400 որոշման

# ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԵՐԸ

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն օրինակելի ձևերով սահմանվում են ջրօգտագործման թույլտվության ձևաթղթի (այսուհետ՝ ձևաթուղթ) լրացմանը ներկայացվող պահանջները:

2. Ձևաթուղթը լրացնելու համար հիմք են հանդիսանում ջրօգտագործման թույլտվության ստացման հայտը (այսուհետ՝ հայտ) (ձևը կցվում է), ջրօգտագործման թույլտվություն ստանալու համար պահանջվող փաստաթղթերը (ցանկը կցվում է) և հասարակայնության ծանուցման գնահատման արդյունքները:

## ՁԵՎԱԹՂԹԻ ԼՐԱՑՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Ձևաթղթում նշվում են՝

1. Ջրօգտագործում իրականացնող անձի գտնվելու (հաշվառման) վայրը (հասցեն), հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստը:
2. Իրականացվող ջրօգտագործման վարչական տարածքը և գտնվելու վայրը (հասցեն):
3. Ջրային ռեսուրսի անվանումը, ջրառի իրականացման վայրի (կետի) նկարագրությունը՝ այն կապելով դրահարևանությամբ գտնվող հայտնի կոորդինատական կետեր ունեցող որևէ օբյեկտի հետ:
4. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով անձի կողմից իրականացվող գործունեության տեսակը, հզորությունը, արտադրողականությունը և ժամանակահատվածը:
5. Ջրային ռեսուրսներից ջրօգտագործողներին հատկացվող ջրառի չափաքանակների և ռեժիմի որոշման կարգի պահանջների համաձայն սահմանված նորմատիվային ջրածավալը ($մ^3$/վրկ, $մ^3$/օր, հազ. $մ^3$/տարի) ըստ մակերևութային և /կամ/ ստորերկրյա ջրային ռեսուրսների:
6. Ջրառի ռեժիմն ըստ ամիսների պայմանավորված ջրային ռեսուրսի էկոլոգիական թողքի և այդ հատվածում այլ ջրօգտագործողների ջրապահանջի ապահովմամբ:
7. Ջրօգտագործման թույլտվության պահանջների կատարման նկատմամբ նախատեսվող հսկողության առարկա հանդիսացող օբյեկտը և գործընթացը՝ ըստ ժամանակահատվածների:
8. Կեղտաջրերի և ցամաքուրդային ջրերի ընդունման համար կլանվող հորատանցքների, սպառված հանքավայրերի, հանքահորերի ու բաց հանքերի օգտագործման և արտահոսքի թույլտվության կարգի պահանջների համաձայն սահմանված կեղտաջրերի նորմատիվային ծավալը ($մ^3$/վրկ, $մ^3$/օր, հազ. $մ^3$/տարի):
9. Արտահոսք իրականացնող հիդրոտեխնիկական կառույցի (այսուհետ՝ ՀՏԿ) նկարագրությունը:
10. Կեղտաջրերի և ցամաքուրդային ջրերի ընդունման համար կլանվող հորատանցքների, սպառված հանքավայրերի, հանքահորերի ու բաց հանքերի օգտագործման և արտահոսքի թույլտվության կարգի պահանջների համաձայն սահմանված՝ թույլատրելի սահմանային

արտահոսքի կոնցենտրացիաները ժամային կտրվածքով (մգ/լ, գ/$մ^3$ և գ/ժամ):

11. Ջրօգտագործողի կողմից կատարվող ջրի ստանդարտների մոնիտորինգային ուսումնասիրությունների արդյունքների հրապարակման միջոցը, հաճախականությունը և բովանդակությունը:

12. Միջոցառումների պլան, որը նպատակաուղղված է ջրօգտագործման հետևանքով ջրային ռեսուրսների վրա բացասական ազդեցության կանխմանը (նվազեցմանը) և կամ համապատասխան նախագծով նախատեսված վերացմանը:

13. Ջրառի ծավալների և (կամ) կեղտաջրերի ու վնասակար նյութերի արտահոսքի քանակների սկզբնական հաշվառման մեթոդի, եղանակի ընտրության, հաշվառման արդյունքների գրանցման տվյալների ցանկը և հաշվետվությունը ներկայացնելու հաճախականությունը:

14. Ֆինանսական և (կամ) այլ երաշխիքներ, դրանց կիրառման դեպքերը և պայմանները:

15. Ջրօգտագործման թույլտվություն ստանալու համար պետական տուրքի վճարման անդորրագրի համարը և ամսաթիվը, ամիսը, տարեթիվը, օրենքով սահմանված բնապահպանական և բնօգտագործման վճարների համար հիմք հանդիսացող ջրօգտագործման չափաքանակները:

16. Ժամանակահատվածը, որի ընթացքում ջրօգտագործման թույլտվությունը սահմանված կարգով պետք է գրանցվի պետական ջրային կադաստրում:

**ԼՂՀ կառավարության աշխատակազմի**
**ղեկավար-նախարար** **Ս. Գրիգորյան**

**Ձև**

## ՀԱՅՏ

## ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՄԱՆ

1. Հայտատու

______________________________________________________________________
(հայտատուի անվանումը (անունը, ազգանունը), հասցեն և հեռախոսահամարը)

_______________________________________________________________________________

_______________________________________________________________________________

2. Հայտը ներկայացնելու նպատակը

_________________________________________________
(նոր ջրօգտագործման թույլտվության ստացում, գործող

_______________________________________________________________________________

ջրօգտագործման թույլտվության վերաձևակերպում, գործող ջրօգտագործման թույլտվության ձևափոխում)

3. Ջրօգտագործման նպատակները

______________________________________________ (խմելու, տնտեսական, ոռոգման, արդյունաբերական և այլն)

______________________________________________

4. Պահանջվող ջրառի ծավալը և ջրօգտագործման ժամանակահատվածը, այդ թվում՝

ա)

______________________________________________ (մակերևութային ջրային ռեսուրսի անվանումը, ջրօգտագործման ծավալը՝ հազ $մ^3$/տարի, $մ^3$/օր, լ/վրկ)

______________________________________________

բ)

______________________________________________

______________________________________________ (ստորերկրյա ջրային ռեսուրսներից՝ հազ.$մ^3$/տարի, $մ^3$/օր, լ/վրկ)

5. Սերվիտուտ կամ այլ պահանջներ

______________________________________________ (սերվիտուտ կամ անձանց այլ սեփականությունից)

______________________________________________

______________________________________________ (ջրընդունիչ, կառուցվածք և այլն/օգտվելու անհրաժեշտություն)

______________________________________________

______________________________________________

6. Հիդրոտեխնիկական կառույցի նկարագրություն

______________________________________________ (ՀՏԿ-ի առկայությունը կամ նորի

______________________________________________ կառուցման անհրաժեշտությունը, հզորությունը)

______________________________________________

______________________________________________

7. Նախկին ջրօգտագործման ծավալը (ցուցանիշը) այդ թվում՝

ա)

______________________________

(մակերևութային ջրային ռեսուրսներից (հազ. $մ^3$/տարի, $մ^3$/օր, լ/վրկ) ջրօգտագործման թույլտվության

______________________________

հիման վրա)

բ)

______________________________

(ստորերկրյա ջրային ռեսուրսներից (հազ. $մ^3$/տարի, $մ^3$/օր, լ/վրկ) ջրօգտագործման թույլտվության հիման վրա)

______________________________

8. Առաջացող կեղտաջրերի թափման տեղը և ծավալը

______________________________

(բաց ջրավազան կամ կենտրոնացված

______________________________

______________________________

կոյուղու կոլեկտոր /հազ. $մ^3$/տարի, $մ^3$/օր, լ/վրկ)

______________________________

9. Կեղտաջրերի մաքրման մասին տեղեկություն

______________________________

______________________________

______________________________

______________________________

10. Պարտավորություն՝ ջրօգտագործման թույլտվությանն առնչվող վճարների կատարումն ապահովելու համար

______________________________

______________________________

______________________________

______________________________

Սույնով հաստատում եմ հայտում ներառված տեղեկատվության բավարար, ճշգրիտ և ավարտուն լինելը:

Ոչ մի առարկություն չունեմ հայտի քննարկմանը հասարակական մոտեցումների կամ մասնակցության դեմ (բացի գաղտնի տեղեկատվությունից):

Պարտավորվում եմ կատարել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ջրային օրենսգրքի պահանջներին համապատասխան ջրօգտագործման թույլտվության մեջ նշված՝ ջրօգտագործողներին վերաբերող բոլոր պարտականությունները:

11. Ջրօգտագործման թույլտվության հայտներկայացնողի

_________________________________ (պաշտոնը, ատորագրությունը

________________________________________________________________________________

(անունը, ազգանունը)

________________________________________________________________________________

Կ.Տ.

ՑԱՆԿ

ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

1. Ջրօգտագործման իրավաբանական անձի պետական գրանցման վկայականի կամ ֆիզիկական անձի անձնագրի պատճենը:

2. Ջրօգտագործման հետևանքով շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին եզրակացությունը՝ օրենքով նախատեսված դեպքերում:

3. Ջրօգտագործման համար հողի կամ այլ անշարժ գույքի սեփականության կամ վարձակալության իրավունքը հաստատող փաստաթղթի պատճենը:

4. Ցամաքուրդային ջրաղբյուրի թողունակության և որակի վերաբերյալ համապատասխան փաստաթուղթ՝ տրված այդ ջրհեռներն օգտագործվող կազմակերպության կողմից (անհրաժեշտության դեպքում):

5. Հնարավոր սերվիտուտի և համապատասխան գույքից օգտվելու ձևի նկարագրությունը, սեփականատիրոջ անունը, ազգանունը և գտնվելու վայրը:

6. Նախկին ջրօգտագործման թույլտվությունը (նախկինում ջրօգտագործվող լինելու դեպքում):

7. Պետական տուրքի վճարման անդորրագիրը (բնօրինակ):

8. Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմնի կողմից մշակված փաստաթղթերին հասարակայնության ծանուցման և հրապարակայնության կարգի պահանջների համաձայն՝ տպագիր միջոցներում հրապարակված ջրօգտագործման մասին հայտարարությունը (հայտի նախնական գնահատումից հետո):

9. Ջրային ռեսուրսներից ջրօգտագործողներին հատկացվող ջրառի չափաքանակների ու ռեժիմի որոշման կարգով հաստատված ջրօգտագործման և ջրահեռացման անհատական նորմաները:

10. Կեղտաջրերում պարունակվող վնասակար նյութերի թույլատրելի սահմանային արտահոսքի (ԹՍԱ) նորմաները՝ հաշվարկված լիազոր մարմնի ղեկավարի հրամանով հաստատված “Ջրային ռեսուրսներ թափվող կեղտաջրերի թույլատրելի սահմանային արտահոսքի չափաքանակների հաշվարկի մեթոդիկա” գերատեսչական ակտի համաձայն:

11. Տեղանքի հատակագիծը (սխեմա), որտեղ արտացոլվում է ջրօգտագործման կետի (կոորդինատական առանցքներ)՝ դրա հարևանությամբ գտնվող որևէ հայտնի օբյեկտի հետ կապը հաստատված տեղական ինքնակառավարման մարմնի կողմից՝ անհրաժեշտության դեպքում:

12. Կոմունալ-կենցաղային, բուժիչ և առողջապահական նպատակներով ջրօգտագործման դեպքում համապատասխան փաստաթուղթ (եզրակացություն)՝ տրված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարության պետական հիգիենիկ համաճարակային փորձագիտական կենտրոնի կողմից: